



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԹԵՄԻՍ ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ
 ԲԱՐՁՐ. Տ. ՄՈՒՇԵՂ Ս. ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
 ՀԻՐԸՆԿԱԼԵՑ ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
 ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդը, յանձինս Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի, Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Զափլան Արքեպիսկոպոսի Երկուշաբթի, 5 Փետրուար 2007ին, հիւրընկալութեամբ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ իր հերթական ժողովը գումարեց:

Առաւօտեան ժամը 11:00ին, եկեղեցական կարճ արարողութիւն մը տեղի ունեցաւ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Իւրաքանչիւր եկեղեցի իր եկեղեցականներու մասնակցութեամբ, իր ժամակարգին ու եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, Աստուծոյ յատուկ աղօթք եւ օրհնութիւն վերառաքեց:

Ապա, Առաջնորդ Սրբազան հայրերը, ընկերակցութեամբ իրենց ընկերակից եկեղեցականներուն՝ ուղղութեան եկեղեցւոյ «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահը, ուր տեղի ունեցաւ եպիսկոպոսաց ժողովը: Բացման աղօթքէն ետք, ժողովը մէկ տարուան համար, միաձայնութեամբ ատենապետ վերընտրեց Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սերաբիոն եպիսկոպոսը: Անցնելով օրակարգին, ժողովը քննարկեց յառաջիկայ միատեղ ծրագիրներու եւ աշխատանքներու կարելիութիւնները: Ժողովը, լսելէ ետք Ուղղափառ եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ երիտասարդաց յանձնաժողովներու զեկոյցները, որոշեց.

ա.- Յառաջիկայ Մարտ ամսուան Շաբաթ, 24 Մարտ 2007ին, Իկըլ Ռաք շրջանի Ղրպտի Ուղղափառ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 9:00էն յետ-միջօրէ ժամը 5:00 Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդաց միօրեայ դաստիարակչական եւ հոգեւոր բնոյթի հաւաք մը կազմակերպել, մասնակցութեամբ հոգեւոր առաջնորդներու եւ երիտասարդաց վարիչներու:

բ.- Մոնթպէլլի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ Հինգշաբթի, 12 Ապրիլ 2007, առաւօտեան ժամը 10:00ին, Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներու համատեղ Ս. Պատարագ մատուցել, մասնակցութեամբ եկեղեցականաց դասուն, կազմակերպել հոգեւոր լսարան ապա տեղի ունենայ հաւաքական ճաշ,

հիւրընկալութեամբ մեր թեմի Ազգային Առաջնորդարանին եւ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգաբարձութեան:

գ.- Էջմիածնական Թեմի Առաջնորդարանին մէջ Շաբաթ, 27 Յուլիտեմբեր 2007, առաւօտեան ժամը 9:30Էն յետ-միջօրէ ժամը 2:00, միջ-կիրակնօրեայ դպրոցներու 9-15 տարեկան աշակերտներու մասնակցութեամբ եւ երգեցողութեամբ Ս. Պատարագ եւ աշակերտական միօրեայ դաստիարակչական հաւաք:

Յիշենք նաեւ, որ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Խորհուրդի գործունեութիւններէն եւ տարուած աշխատանքներէն էին անցեալ Մայիսին կայացած Առաջնորդներու համատեղ Ս. Պատարագը եւ եկեղեցականաց միօրեայ համագումարը, ինչպէս նաեւ միջ-կիրակնօրեայ դպրոցներու Ս. Գրային գիտելիքներու մրցոյթը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Մայիսին, Ս. Աստուածածին եկեղեցոյ յարկին տակ, հիւրընկալութեամբ Թեմիս Առաջնորդ Սրբազան Յօր եւ մասնակցութեամբ եկեղեցոյ Յոգեւոր Յովիւներուն եւ հոգաբարձութեան:

Ազգային Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակը, Երիտասարդաց եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ Յանձնախումբերը, հովանաւորութեամբ եւ գլխաւորութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազան Յօր, արդէն իսկ ծրագրումի նախնական աշխատանքներու ձեռնարկած են, լաւագոյնս մասնակցելու Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջ-երիտասարդաց եւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու միօրեայ դաստիարակչական հոգեւոր հաւաքներուն:

Հաւաքական սիրոյ ճաշի ընթացքին, տեղի ունեցաւ մտերմիկ գրոյց Առաջնորդներու եւ եկեղեցականներու միջեւ, որոնք ընդհանրապէս անդրադարձան եւ խորհրդակցեցան այժմեական ընթացիկ հարցերու, ինչպէս նաեւ Առաքելական Ուղղափառ եկեղեցիները յուզող խնդիրներու՝ վարչական, կրօնադաստիարակչական, պատանեաց եւ երիտասարդական հարցերու շուրջ:

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդի յաջորդ ժողովը, հիւրընկալութեամբ Գերշ. Տ. Եունին Քափլան Արքեպիսկոպոսի, տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, Յունիս 19, 2007ին, Ասորիներու Ս. Եփրեմ Աթոռանիստ եկեղեցոյ մէջ:

Մ.Ծ.Վ.Ա.

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE, HOSTS THE MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS OF THE WESTERN US

On the morning of Monday, February 5th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, hosted the meeting of the Council of Oriental Orthodox Bishops of the Western U.S. at St. Mary's Church in Glendale. In attendance were H.E.

Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion, Prelate of the Coptic Orthodox Church, and H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, Prelate of the Syriac Orthodox Church.

The meeting commenced at 11:00 a.m. with clergy from each church participating in a brief service inside the church. The Prelates and clergy subsequently headed to "Armenak Der Bedrossian" Hall where the meeting took place. Following the opening prayer, Bishop Serapion was unanimously elected for a one-year term as Chair of the council. The council discussed possibilities for collaboration and upon hearing reports from the Oriental Orthodox Sunday School and youth committees it decided on the following:

1) A one day educational and spiritual youth gathering with the participation of the Prelates and youth directors, to be held on Saturday, March 24, 2007, from 9:00 a.m. to 5:00 p.m., at St. Mary's Coptic Orthodox Church in Eagle Rock.

2) Joint Holy Mass, lecture, and reception at Holy Cross Cathedral on Thursday, April 12, 2007, starting at 10:00 a.m., hosted by the Western Prelacy and the Board of Trustees of Holy Cross Cathedral in Montebello.

3) Holy Mass and educational gathering with the participation of Oriental Orthodox Sunday Schools' students on Saturday, October 27, 2007, from 9:30 a.m. to 2:00 p.m. at the Western Diocese.

Among past joint events were Holy Mass and a one-day clergy conference last May, as well as a Bible competition among Sunday School students that took place on May 13, 2006, hosted by the Prelate at St. Mary's Church in Glendale.

During the luncheon, the Prelates and clergy discussed issues of concern to Oriental Orthodox Churches, including religious education and youth activities.

The next meeting of the council is being hosted by Archbishop Eugene Kaplan at St. Ephraim Syriac Orthodox Church on June 19, 2007.